

**«Խորία» հասկացության իմաստային փոխակերպումն
անտիկ Հունաստանում**

*Խորիկյան Հովհաննես,
Մանասյան Լուսինե*

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-108>

Հանգուցային բառեր. Հուներոս, դասավոր, Հերոդոտոս, Թուկիդիդես, Քսենոփոն, մուսա, Արիստոտել, Մովսես Խորենացի

Նախաբան

Ցանկացած բառի հասկացության զարգացումն ըմբռնելու համար պետք է սկսել ստուգաբանությունից: Այս առումով հունական «*խորία*» բառը վաղուց են կապել հնդեվրոպական «*wid-weid*» արմատի հետ, որն իմաստային տեսանկյունից կապված է լատիներեն «*video*», ռուսերեն «*видеть*», սանսկրիտերեն «*vettas*», հայերեն «*գիտենալ* (գիտելիք), գիտություն» [7, 181] բառերի հետ: Նշված արմատից են ծագում հունարեն *οἶδα* «*գիտեմ*» և *εἶδέναι* «*գիտենալ*» բառերը՝ նշանակելով ոչ միայն տեսողական ընկալումը, այլ նաև ճանաչողական գործընթացները, որոնք դժվար չէ նկատել նաև մտածողության ոլորտի հետ կապված ռուսերեն «*ведать*» և գերմաներեն «*wissen*» բառերում [19, 447; 13, 11-12]:

Տեսունակության (տեսնելու հնարավորությունը) ըմբռնումը՝ որպես գիտելիքի կամ իմացության էական աղբյուր, բերում է այն մտքին, որ *ἵστωρ*-ը նա է, ով և՛ տեսնում է, և՛ գիտի, ասել է թե՛ գիտի տեսնելով: *ἵστωρ*-ը հին հունարեն նշանակում է «տեղեկանալ, իրագեկվել (ձգտել իմանալ)», «տեղեկացնել որևէ մեկին», այսինքն՝ *ιστορία*-ն հարցուփորձով տեղեկանալն է [26, 101-102]:

Սկզբում առաջացել է ոչ թե «*ιστορία*» բառը, այլ՝ վերջինիս ազգակից «*ιστορ*» և «*ιστορέω*» բառերը: *ἵστωρ* բառը ցույց էր տալիս մեկին, ով հավաքում, վերլուծում, գնահատում և վերապատում էր որոշ տեղեկություններ [13, 12]: «*Ιστορέω*» բայածեր նշանակել է տեսնել, հավաքել վկայություններ կամ տեղեկություններ (լուրեր), պատմել տեսածը կամ վերապատմել եղած տեղեկությունները: Կարճ ասած, բառն ունի երկու հիմնական նշանակություն. ա) «*հարցնել*», «*հարցուփորձ անել*», «*փնտրել*» և այլն, բ) «*որպես ականատես*՝ պատմել տեսածի մասին» [13, 12]:

Նկատի ունենալով «*ιστορία*» եզրույթի իմաստային կիրառման նախնական և հետագա իմաստային փոփոխությունների տարածաժամանակային ընկալումները փորձել ենք անտիկ աղբյուրների և մասնագիտական գրականության վերլուծության հիման վրա ցույց տալ բառի գործածման առանձնահատկությունները պատմություն (ιστορία)-տեքստի ընկալման տիրություն: Այս համատեքստում որոշակի համեմատություններ ենք կատարել նաև Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» երկի որոշ համադրելի դրվագների հետ:

**«Խորία» եզրույթի իմաստային կիրառման առանձնահատկությունները
հին Հունաստանում**

«*Ιστορία*» եզրույթը հին Հունաստանում վերաբերում էր ոչ միայն պատմական հետազոտություններին, այլ նաև առասպելներին, բանաստեղծական պոեմներին ու ընդհանրապես մարդկային մտածողության և ճանաչողության տարբեր ակտերին [19, 443-444]²: Այս

¹ Հինարևելյան ժամանակագիրը, որի համար աշխարհը, այդ թվում մարդկային հասարակությունը, մեկընդմիջ տրված է, նկարագրում է, իսկ հին հույն պատմագիրը՝ փնտրում [17, 13, 134]:

² Պատմության հասկացության համար հին հույներն օգտագործել են նաև այլ եզրույթներ. *στοργάματα* «երկ», «ստեղծագործություն», *ὑπόμνημα* «հիշողության համար գրված», *ὑπομύματα* «հուշագրություններ, տարեգրություն», *πραγματεία* «աշխատանք», «երկ», *σύνταξις* «կապ», «կառուցում», *ἀνάκρισις* «որոնում, փնտրում», *διήγησις* «շարադրանք», «պատմություն, պատմածը» և այլն [19, 443]:

առումով հատկանշական է, օրինակ, Պլինիոս Ավագի «Բնական պատմություն» («Naturalis historiae») երկը, որը պատմության ընկալման հետ որևէ կապ չունի և նշանակում է «բնագիտություն», այսինքն՝ հին Հունաստանում «պատմություն» եզրույթը և պատմություն հասկացությունը նույն բանը չեն նշանակել [19, 444]:

Հոմերոսի համար [միջնորդ] դատավորը կոչվել է Խորո, որը պետք է ուսումնասիրեր, լուծեր վեճը, այսինքն՝ դատավորը համարվել է բանիմաց, գիտակ, քննող, քաջատեղյակ մեկը, նաև վկա: «Խորո»-ը հեղինակավոր մեկն (կամ մի քանիսը) է, որն ընտրվում էր: Նա էր կայացնում առաջին վճիռը, որը պետք է հաստատեր ժողովրդական ժողովը [24, 324, 530]³: Հետագայում այս եզրույթով սկսեցին ներկայացնել ընդհանրապես բոլոր հետազոտողներին: Եվ պատմագիրը դարձավ դրա մասնավոր արտահայտություններից մեկը [7, 181]:

«Ողիսական»-ում Հերակլեսը «բազմաթիվ բռնությունների» ակնատեսն է կամ մասնակիցը (էռիսոր) [25, 306]: Հոմերոսի համար մուսաները երգեցողության մեջ հասկացող կամ ստեղծագործող գործիչներ են [19, 448]: Հոմերոսի համար խնդրո առարկա եզրույթը ցույց է տալիս տեսողական ընկալումից բխող մտածական ուղղվածություն, հետևաբար նա, ով տեսնում է, ոչ թե պարզապես տեսնում է, այլ դատում է տեսածի մասին և համարվում է տեսողական ընկալման տվյալ ոլորտի վկան կամ հեղինակությունը [19, 448]:

Քննարկվող եզրույթը դասական ողբերգակների (Էսքիլոս, Սոֆոկլես, Եվրիպիդես) մոտ նշանակել է նաև «հմուտ, փորձված», «հարցնում եմ», «հարցուփորձ եմ անում», «փնտրում եմ», «գիտեմ» (ողբերգական նշանակությամբ) և այլն: Դատելով հին հունական էպոսի և հույն ողբերգակների եզրույթի իմաստային կիրառման տարբերություններից «իստորեո» և «էթոթեո» բառերի միջև կարելի է տեսնել պարզ տարբերակում. վերջինը սոսկ հարցադրում է, իսկ առաջինը հարցադրում է այն հիմքով, որ մեկ ուրիշն անձամբ է տեսել կամ ապրել ու զգացել [29, 62]:

Հին հույն փիլիսոփաների համար «iσtopρία» («ուսումնասիրություն/հետազոտություն», «գիտենալ») եզրույթն օգտագործվում է բնափիլիսոփայական և տիեզերաբանական առումով՝ հակադրելով երկնքի ուսումնասիրությունը մարդկանց ու նրանց բարքերի ուսումնասիրությանը [19, 449], այսինքն՝ եզրույթը «պատմություն» նշանակությամբ գրեթե չի օգտագործվում:

«Խորո» եզրույթը ժամանակակից ընկալմամբ օգտագործում է Հեկատեոս Միլեթացին (մ. թ. ա. VI դարի 2-րդ կես-V դարի սկիզբ): Վերջինս բառն օգտագործում է հոգնակի թվով, ինչը խոսում է այն մասին, որ «պատմություններ» բառի հեղինակը նկատի է ունեցել պատմվածքներ, լեգենդներ, այլ ոչ թե պատմական հետազոտություն: Սակայն Հեկատեոսը ցուցաբերել է նաև անձնական մոտեցում և գրել է այն մասին, ինչը ճշմարիտ է համարել [15, 210]: Պոլիբիոսը ևս բառն օգտագործում է հոգնակի թվով [27, 10; 28, 72], երբ խոսում է պատմական իրադարձությունների մասին [19, 450]:

«Խորո» եզրույթը, այսպես կոչված, պատմության իմաստով կիրառում են լոգոգրափոսները (արձակագիրները կամ նախապատմագիրները [15, 202]) և Հերոդոտոսը [19, 450]: Հետաքրքիրն այն է, որ իստորեո եզրույթը երկար ժամանակ օգտագործվել է առասպելաբանական-ծագումնաբանական (ծննդաբանական) նշանակությամբ՝ նույնացվելով առասպելաբանական գրույցին և պատմական ավանդությանը [19, 451]⁴, ըստ այդմ էլ՝ լոգոգրափոս-

³ «Խորո»-ի մասին մանրամասն տե՛ս 12, 39-40: Միջնորդ դատավոր (δαιτωτής) էր նաև Կորնթոսի տիրան Պերիանդրոսը, որը լուծում էր տարբեր պոլիսների սահմանային վեճերը [23, 116; 14, 117], այսինքն՝ Հերոդոտոսն այլ բառ է գործածում:

⁴ Մենդաբանական գրականությունը տարբերայնորեն չէր առաջացել, ոչ էլ առասպելաբանությունն էր կապված բնագիտական հավատի հետ: Խնդիրը վերաբերում էր առասպելների համակարգված հավաքագրմանը, դրանք մեկ ամբողջի մեջ միավորելուն, հնուց մնացած հակասությունները մաքրելուն և գաղութացման դարաշրջանի հունական մտածողության փոփոխությանը [19, 455]:

ները համարվել են նաև առասպելագիրներ [21, XXVII-XXXVIII]⁵: Հերոդոտոսը նշված եզրույթն օգտագործում է որպես հարցուփորձի հունանիշ, ընդ որում՝ հարցախույզի և լուրջ իրավիճակների նկարագրության համատեքստում [19, 452, օրինակները տե՛ս նույն էջում]: Մակայն Հերոդոտոսի մոտ «ιστορία» եզրույթն օգտագործվում է նաև ժամանակակից իմաստով, երբ փորձում է բացատրել հույն-պարսկական պատերազմների պատճառները: Կլիոյի մշակ Հերոդոտոսը վերապատմում է պատմության մուսայի խոսքերը [12, 36-37]: Իր երկի նպատակը Հերոդոտոսը նախաբանում սահմանում է որպես ιστορίας ἀπόδειξις, ինչը մոտավորապես կարելի է հասկանալ «հիմնավորված (պատճառաբանված-Հ.Խ.) շարադրանք, փաստական ու տրամաբանական արդարացված պատմություն» կամ ուսումնասիրության/հետազոտության արդյունքների շարադրանք [19, 453]⁶, այսինքն՝ քաղաքացիական համայնքի ներկայացուցչի համար ճշմարտության ձգտման ճիգը նպատակ է:

Մեկ այլ տեղում խոսվում է պատմության նպատակի («...ιστορίας λόγον») մասին [23, 398]: Հերոդոտոսն ուզում է ասել, որ իր շարադրանքի նպատակը փյունիկյան առաջնորդների անունները նշելը չէ: Ակնհայտ է, որ λόγος-ն (բան, խոսք) այս համատեքստում նշանակում է «ծրագիր», «աշխատանք», «նպատակ» կամ նրա հետազոտության խնդիրը [19, 453]⁷: Իր շարադրանքում Հերոդոտոսը հետևում է որոշակի մեթոդի, ինչը նա չի պատկերացնում, բայց նրա համար «ιστορία»-ն արդեն կապված է ժողովուրդների ու ցեղերի, նրանց պատերազմների ու խաղաղության հետ [19, 453], այսինքն՝ պատմիչը վեր է կանգնում առոտին իրողություններից: Ի տարբերություն Հերոդոտոսի՝ Թուկիդիդեսը փորձում է գտնել ճշմարտությունը:

Հերոդոտոսի «ιστορίας ἀπόδειξις» բառակապակցությունը («հարցումներով ստացված տեղեկություններ», այսինքն՝ ստացվում է բանավոր ճանապարհով ձեռքբերված տեղեկություններ [հմմտ. 20, 72-73]⁸) նշանակել է, որ պատմիչը դեռ չգիտի եզակի թվով «պատմության» մասին, բայց նրա հավաքած հսկայական փաստական նյութը, տարբեր իրադարձությունների շարադրանքը գոնե ինտուիտիվ մակարդակում թույլ է տալիս խոսել պատմության գաղափարի մասին [10, 6-7]: Հերոդոտոսի «Պատմությունը» (ιστορίη) կարելի է անվանել «Հարցումների շարադրանք կամ ներկայացում» [20, 8; 9, 9]: Համաձայն ավանդու-

⁵ Օճնդաբանական առասպելագրությունը պահանջված էր արիստոկրատական միջավայրում, քանի որ անցյալը կապում էր ներկայի հետ [16, 13]: Նկատենք, որ Մովսես Խորենացին ևս, երբ պատմում է մեր նախնիների ծագման, հերոսական գործերի մասին («... սակայն բազում գործք արուբեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս, և արժանի գրոյ յիշատակի...»: Տե՛ս 5, 10), հետևում է հունական առասպելագրության հիմնական ընկերային գործառույթին՝ անցյալը կապում է ներկային [16, 13]: Այստեղ տեղին է մեջբերել պատմության մասին Մարկ Բոլիի սահմանումը. «Պատմությունը հետազոտություն է, ուստի՝ ընտրություն: Նրա առարկան անցյալը չէ. «Ինքնին միտքը, թե անցյալը իբրև այդպիսին կարող է գիտության առարկա լինել, անհեթեթ է»: Նրա առարկան «մարդն» է կամ ավելի շուտ «մարդիկ», իսկ առավել ստույգ՝ «մարդիկ ժամանակի մեջ» [2, 20]:

⁶ «Պատմություն» հասկացության ընկալման փոփոխությունը նշանակում էր առասպելաբանական և վիպերգական (էպիկական) հերոսականության ժամանակներից անցում պոլիսային ժամանակի [11, 48-53, 88], այսինքն՝ տոհմական համայնքի փոխակերպում պոլիսային քաղաքացիության: Հստ որոշ կարծիքների՝ Հերոդոտոսի երկի նախաբանի հեղինակն այլ մարդ է եղել [15, 9], ինչը մեր քննության համար էական նշանակություն չունի: Ամեն դեպքում, նախաբանի հեղինակը ժամանակագրական առումով Հերոդոտոսին մոտ է եղել:

⁷ Հույների համար «μύθος», «έπος», «λόγος» եզրույթները նշանակել են «բառ», բայց ունեցել են իրենց բառօգտագործման նեղ ոլորտը [18, 7]:

⁸ Թուկիդիդեսը գրել է «վկայությունների հիման» (έχ τεχμηρίων) վրա, այսինքն՝ գրի է առել իրադարձություններ, որոնց ականատեսն է եղել կամ լսել է ուրիշներից, բայց հետազոտել է կամ ստուգել [13, 25]:

թյան՝ Հերոդոտոսն իր երկն անվանել է «Մուսաներ»⁹, և մ. թ. III դարում Լեքսանդրացի գիտնականները երկը բաժանել են 9 գրքերի, որոնցից յուրաքանչյուրն անվանել են մեկ մուսայի անունով, իսկ ամբողջ երկը՝ «Պատմություն ինը գրքից» [13, 18]: Ինչևէ, [պատմիչների] պատմության առաջացումը ևս հունական բանական մտքի զարգացման դրսևորումն էր:

Պատմություն՝ որպես գրական առանձին ժանր

Առաջին անգամ հին տեքստերում «ιστορία» բառը՝ որպես գրական առանձին ժանր, մ. թ. ա. IV դարի կեսերին օգտագործում է Արիստոտելը, որը Հերոդոտոսին անվանում է պատմագիր՝ «պատմական երկի հեղինակ» նշանակությամբ: Այս նշանակությունը հելլենիզմի ժամանակաշրջանում արդեն տարածվում է, պատմագրությունը դառնում է հունական գրականության գրեթե հիմնական արձակ ժանրը: Հելլենիստական դարաշրջանում են առաջանում ստեղծագործություններ, որոնք արդեն վերագրվում են «ιστορία» բառով [13, 18-19]:

Թուկիդիդեսը և Քսենոփոնն իրենց պատմական աշխատությունների անվանումներին համար «ιστορία» եզրույթը չեն գործածում¹⁰, ինչը խոսում է այն մասին, որ նշված հեղինակներն իրենց ստեղծագործություններն ավելին են համարել, քան «պատմություն» է¹¹: Ըստ Էուլյան, «ιστορία» եզրույթը շատ վաղ ժամանակներից է նշանակել ցանկացած տեսակի կամայական մտացածին բան, պատում և պատմվածք, որոնք հավակնել են որևէ իրականության կամ պատմական փաստերի համապատասխանության [19, 454]: Հետաքրքիր է, որ Դեմոկրիտեսի հետևորդ Նավսիփանեսը համոզմունքի ուժը կապում էր ոչ թե «պատմության», այլ փաստերի (*πραγματα*) իմացության (*εἰδησις*) հետ, այսինքն՝ նրա համար «պատմությունը» հեքիաթ է, երևակայություն, առասպել [19, 454]: Թալեսի համար «ιστορία»-ն «հետազոտություն» է, Պլատոնի համար՝ «իմացություն» (օրինակ, բնության իմացություն), Արիստոտելի համար՝ «իմացություն» կամ «հետազոտությունը» որպես գործընթաց (օրինակ, «հոգու հետազոտությունը»), Դեմոսթենեսի համար՝ «ըմբռնում, հասկացում» և այլն: Ավելի ուշ «ιστορία»-ն արդեն ընկալվում է ոչ թե իմացության, այլ գիտելիքի գործընթաց, իսկ գիտելիքը վերաբերում էր ցանկացած բնագավառին, այդ թվում և բնությանը [13, 23]:

Անտիկ ժամանակաշրջանում «ιστορία» բառի գերիշխող նշանակությունը կոնկրետ «տեքստ» է՝ «պատում, պատմվածք, քննարկում» և այլն, մյուս նշանակությամբ՝ տեքստերի որոշակի տեսակը (գրական ժանրը): Պատմություն (*ιστορία*)-տեքստի հիմնական առաքելությունն օգուտ ստանալն է՝ ի տարբերություն գեղարվեստական գրականության, որը պետք է հաճույք պատճառեր, ինչի մասին գրել են հին հեղինակներից շատերը [13, 17, 24]: Հին Հունաստանում Կլիոյի հովանավորության տակ գտնվող պատմությունն ավելի շուտ ընկալվում էր ոչ թե որպես գիտություն, այլ արվեստ: Հետևաբար, պատմագիրները Կլիոյի քրմերը կամ մարգարեններն էին [15, 213]:

«Ιστορία» եզրույթը հայերենում չի պահպանվել և համարժեք է «պատմություն» բառի իմաստային ընկալման սահմաններին: Ըստ Էուլյան, խնդիրն այն է, որ հայ պատմագրությունը սկզբնավորվեց V դարում հայոց գրերի գյուտից հետո, երբ անտիկ պատմագրությունն արդեն ուներ հազար տարվա գրավոր ավանդույթ: Ալեքսանդրիայում հունարեն սովորած Մովսես Խորենացու համար «պատմություն» եզրույթի կիրառման իմաստային տիրույթը համարժեք է «ιστορία» բառի՝ առաջին հերթին հետազոտություն [իմմտ. 5, 11] սահ-

⁹ Հուներոսյան հիմների երգերում մուսաներն անվանվում են ἱστορες, այսինքն՝ գեղարվեստական ստեղծագործության մեջ նրանք համարվել են հավասարակշռության և ներդաշնակության տարր [19, 482]:

¹⁰ Թուկիդիդեսն իր երկն անվանում է Ξυνέγραφε, որը թարգմանել են «պատմություն», իսկ Քսենոփոնի աշխատությունը, որը թարգմանում են «Հունական պատմություն», իրականում հայտնի է «Հելլենիկա» անվանումով [13, 18]:

¹¹ Թուկիդիդեսն իր երկը համարում է χτήμα εις αἰ («հավերժության պիտույք»)՝ ի հակադրություն Հերոդոտոսի «Պատմության» [3, 568]:

մանմանը, ընդ որում՝ մեր Պատմահայրը ցուցաբերել է ակնհայտ պատմաքննական մոտեցում՝ տեսածի, լսածի մասին ունենալով քննադատական վերաբերմունք¹²: Հետաքրքիր է, որ Խորենացին անցյալի մասին գրված երկերն անվանում է նաև «...գլխատակս բանից» [5, 6] պատմական կամ գործերի հիշատակարաններ [4, 68-69], որոնց հեղինակներն իմաստուններն են եղել [5, 8]: Ընդ որում, ի տարբերություն պարսիկ ու քաղղեացի մատենագիրների՝ հույների համար գործածում է պատմագիր բառը [5, 9]՝ ընդգծելով հույների առավելությունը: Պատմական չէ, որ և՛ Խորենացին, և՛ Հերոդոտոսը [22, 2] գրում են մարդկանց գործերի մասին [5, 10-11]՝ նկատի ունենալով իմաստության և քաջության օրինակները:

Եզրակացություն

Ամփոփելով քննությունը՝ կարող ենք եզրակացնել որ՝ ա) «Խոր»-ը նա է, ով և՛ տեսնում է, և՛ գիտի, ասել է թե՛ գիտի տեսնելով, բ) ըստ Հումբրոսի դատավորը կոչվել է Խոր, որը պետք է հետազոտեր, լսեր կողմերին, լուծեր վեճը, գ) «Խորիա» եզրույթը, պատմության իմաստով կիրառում են լոգոգրափոսները և Հերոդոտոսը, դ) առաջին անգամ «Խորիա» բառը որպես գրական առանձին ժանր օգտագործում է Արիստոտելը, ե) Մովսես Խորենացու համար «պատմություն» եզրույթի կիրառման իմաստային տիրույթը համարժեք է «Խորիա» բառի՝ առաջին հերթին ուսումնասիրություն/հետազոտություն սահմանմանը:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-108>

Գրականություն

1. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հատոր Դ, Երևան, 1979, 674 էջ:
2. Բոլկ Մ., Պատմության պաշտպանական, կամ պատմաբանի արհեստը, Երևան, 2018, XXXVIII+389 էջ:
3. Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, Թարգմանությունը Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1986, 651 էջ:
4. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, աշխատասիրությամբ Սո. Մալխասյանցի, Երևան, 1997, 552 էջ:
5. Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, քննական բնագիրը և ներածությունը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարությունեանի, լրացումները Ա. Բ. Սարգսեանի, Երևան, 1991, ԿԳ+485 էջ:
6. Սարգսյան Գ., Պատմագիտական հետազոտություններ, Երևան, 2006, 260 էջ:
7. Ստեփանյան Ա., Պատմության հետազոտություն: Գործք, գրույթ, իմաստ, Երևան, 2014, 496 էջ:
8. Քոչարյան Ռ., Պատմությունը և հերմենևտիկան. Գիրք 1. Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգը (Մովսես Խորենացու մեկ-միասնական պատմագիտության ու պատմափիլիսոփայության և բուն պատմության իսկության բացարձակումը հերմենևտիկական մեթոդաբանությամբ), Երևան, 2016, 632 էջ:
9. Доватур А. И., Каллистов Д. П., Шишова И. А. Народы нашей страны в «Истории» Геродота. Москва, 1982, 455 с.
10. Кессиди Ф. Х. Философия истории Фукидида. Санкт-Петербург, 2008, 272 с.
11. Лосев А. Ф. Античная философия истории. Москва, 1977, 207 с.
12. Неретина С. С. Пауза созерцания, или о сослагательном наклонении в истории // Идеи и Идеалы, 2017, т. 1, № 3, с. 34-53.
13. Савельева И. М., Полетаев А. В. Теория исторического знания: Учебное пособие. Санкт-Петербург, 2007, 523 с.

¹² Պատմության խորենացիական ընկալման մասին տե՛ս 6, 18-22, 44; 8:

14. Суриков И. Е. Полис, логос, космос. Мир глазами эллина. Категории древнегреческой культуры. Москва, 2024, 400 с.
15. Суриков И. Е. Геродот. Москва, 2022, 439 с.
16. Суриков И. Е. Зарождение древнегреческой исторической мысли и архаическая ионийская наука // Вестник РГГУ. Серия «Литературоведение. Языкознание. Культурология», 2021, № 4, с. 10-29.
17. Суриков И. Е. Очерки об историописании в классической Греции. Москва, 2011, 504 с.
18. Тахо-Годи А. А. Греческая мифология. Москва, 1989, 304 с.
19. Тахо-Годи А. А., Лосев А. Ф. Греческая культура в мифах, символах и терминах. Санкт-Петербург, 1999, 717 с.
20. A Commentary on Herodotus Books I-IV, ed. by O. Murray, A. Moreno, New York, 2007, LVI+721 p.
21. Fowler R. L. Early Greek Mythography, Vol. I. Texts, Oxford, 2007, XLVII + 459 p.
22. Herodotus with an English translation by A. D. Godley, Vol. I, Books I-II, Cambridge-Massachusetts-London, 1975, XXI+504 p.
23. Herodotus with an English translation by A. D. Godley, Vol. III, Books V-VII, Cambridge-Massachusetts-London, 1938, XVIII+569 p.
24. Homer. The Iliad, with an English translation by A. T. Murray, Vol. II, London-New-York, 1925, 644 p.
25. Homer. The Odyssey, with an English translation by A. T. Murray, Vol. II, London-New-York, 1919, 455 p.
26. Le Goff J. History and Memory, New York, 1992, XXIII+239 p.
27. Polybius. The Histories, with an English translation by W. R. Paton, Vol. I, Cambridge, Massachusetts, London, 1998, XVI + 425 p.
28. Polybius. The Histories, with an English translation by W. R. Paton, Vol. II, Cambridge, Massachusetts, London, 1979, 522 p.
29. Snell B. Die Ausdrücke für den Begriff des Wissens in der vorplatonischen Philosophie, Berlin, 1924, 100 p.

Семантическая трансформация понятия «ἱστορία» в Древней Греции

*Хорикян Ованнес,
Манасян Лусине*

Резюме

Ключевые слова: Гомер, судья, Геродот, Фукидид, Ксенофонт, муза, Аристотель, Мовсес Хоренаци

Первоначально возникло не слово «ἱστορία», а родственные ему слова «ἵстор» и «ἱστορέω». Слово «ἵстор» указывало на того, кто собирал, анализировал, оценивал и пересказывал определенную информацию. Глагольная форма «ἱστορέω» означает видеть, собирать доказательства или информацию (новости), рассказывать об увиденном или пересказывать полученные сведения. Короче говоря, это слово имеет два основных значения: **а)** «спрашивать», «допрашивать», «искать» и т. д., **б)** «рассказывать о том, что видел сам, будучи очевидцем».

Термин «ἱστορία» в Древней Греции относился не только к историческим исследованиям, но и к мифам, поэтическим сюжетам и вообще к различным актам человеческого мышления и познания.

У Гомера судья назывался «ἵτωρ», который должен был расследовать и разрешить спор, то есть судья считался знающим, сведущим, проверяющим, хорошо осведомленным человеком, а также свидетелем.

Впервые в древних текстах слово «ἱστορία» как отдельный литературный жанр использовался Аристотелем в середине IV века до н. э., который называет Геродота «историком» в значении «автор исторического сочинения». Это значение распространяется уже в эллинистический период, когда историография становится едва ли не основным прозаическим жанром в греческой литературе.

Semantic Transformation of the Conception of “ἱστορία” in Ancient Greece

*Khorikyan Hovhannes,
Manasyan Lusine*

Summary

Key words: *Homer, judge, Herodotus, Thucydides, Xenophon, muse, Aristotle, Movses Khorenatsi*

Initially, it was not the word “ἱστορία” that arise, but its cognate words “ἵτωρ” and “ἱστορέω”. The word “ἵτωρ” indicated someone who collected, analyzed, evaluated and retold certain information. The verb form “ἱστορέω” means to see, to gather evidence or information (news), to tell one about what has been seen or to retell the information received. In short, this word has two main meanings: **a)** “to ask”, “to interrogate”, “to search”, etc., **b)** “to tell one about what one has seen oneself, being an eyewitness”.

The term “ἱστορία” in Ancient Greece referred not only to historical research, but also to myths, poetic plots and, in general, to various acts of human thinking and cognition.

For Homer, the judge was called “ἵτωρ”, who had to investigate and resolve the dispute, that is, the judge was considered a versed, knowledgeable, well-informed person, and also a witness.

The word “ἱστορία” as a separate literary genre was first used in ancient texts by Aristotle in the middle of the 4th century BC, who calls Herodotus a “historiographer” in the meaning of “author of a historical work”. This meaning spreads already in the Hellenistic period, when historiography becomes almost the main prose genre in Greek literature.

Ներկայացվել է	10. 05. 2025 թ.
Գրախոսվել է	30. 05. 2025 թ.
Ընդունվել է տպագրության	26. 11. 2025 թ.